



ԱՄՆ լուրջ աջակցություն կցուցաբերի մեր երկրի հրդեհների կանխարգելման հզորությունների մեծացման գործին



Նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպել է ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլզին: Հանդիպմանը մասնակցել են ԱՄՆ դեսպանատան տնտեսական և առևտրային, բնապահպանական հարցերով պատասխանատուները, ՀՀ բնապահպանության և արտաքին գործերի նախարարությունների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները: Ողջունելով հյուրերին՝ Արծվիկ Մինասյանը շնորհակալություն է հայտնել ԱՄՆ կառավարությանն ու ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությանը բնապահպանական խնդիրների լուծման գործում շարունակական օժանդակության և մեծածավալ աջակցության համար: Նա ներկայացրել է վերջին շրջանում անտառային հրդեհների հետ կապված իրավիճակը, անդրադարձել ամենօրյա ձեռնարկվող ու կանխարգելիչ միջոցառումներին, մանրամասն ներկայացրել նախարարությունում բարեփոխումների ընթացքը: «Որպես ոլորտի պատասխանատու, ես բարձր են գնահատում այն օժանդակությունը, որ այս տարիների ընթացքում ցուցաբերվել է մեր երկրին: Այդ աջակցության շնորհիվ է, որ մենք բազմաթիվ ուղղություններով ունենք առաջընթաց: Պարոն դեսպանի հետ մեր նախորդ հանդիպումներում բազմիցս շեշտել ենք, որ մեր երկրի առաջ ծառացած մի շարք մարտահրավերներ ուղղակիորեն կապված են շրջակա միջավայրի հետ», - նշել է նախարարը: Կարևորելով ԱՄՆ կառավարության օժանդակությունն այրված անտառային տարածքների վերականգնման և անտառային հրդեհների դեմ պայքարի հարցում, նա նաև առանձնացրել է բարձր որակի արբանյակային լուսանկարների, արագ արձագանքման թիմերի ստեղծման, հրդեհների կանխարգելման եղանակների, փորձագիտական խորհրդատվությունների անհրաժեշտությունը: Նախարարն անդրադարձել է սիրողական որսի սահմանափակումներին, կարևորել «խոսրովի

անտառ» պետական արգելոցի պահպանությունը որպես կենդանական աշխարհի էկոմիջանցքի, ինչի տարածաշրջանային նշանակությունը շատ մեծ է: Նա նշել է, որ, որդեգրել են բնապահպանական հիմնախնդիրների լուծման էկոհամակարգային մոտեցումը, խոսել բնապահպանության ոլորտում էլեկտրոնային կառավարման, թույլտվությունները և լիցենզիաները մեկ պատուհանի միջոցով և էլեկտրոնային եղանակով տրամադրելու սկզբունքի կիրառման, ընթացակարգերի պարզեցման և թափանցիկության մասին: Նրա կարծիքով անչափ կարևոր է իրականացվող բարեփոխումների շուրջ հանրության վստահությունը: Դեսպան Ռիչարդ Միլզը շնորհակալություն է հայտնել բավականին ամփոփ տեղեկատվության համար, ողջունել իրականացվող բարեփոխումները ու հասարակության վստահության մեծացմանն ուղղված քայլերը որպես կառավարման արդյունավետությանն ուղղված շատ կարևոր գործոն: Անդրադառնալով անտառային հրդեհներին՝ դեսպանն իր երախտիքի խոսքն է փոխանցել «խոսրովի անտառ» պետական արգելոցի հրդեհի մարման գործում ռուս օդաչուներին կատարած աշխատանքի համար: Դեսպանը տեղեկացրել է հաջորդ շաբաթ Հայաստան ժամանող ԱՄՆ անտառային ծառայության «Այրված տարածքների արտակարգ իրավիճակների վերականգնման» թիմի այցի մասին, որը համապատասխան օժանդակություն կցուցաբերի նախարարության և արգելոցի աշխատակիցներին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև ԲՀՊՏ-ի հրդեհների կանխարգելման կարողությունների հզորացման նպատակով նյութեր ամսվա ընթացքում ևս մեկ փորձագիտական խումբ իրավիճակում մասին:

• ԱՄՆ լուրջ աջակցություն կցուցաբերի մեր երկրի հրդեհների կանխարգելման հզորությունների մեծացման գործին

Սկիզբը էջ 11

«Խոսքովի աղետալի հրդեհից հետո ԱՄՆ դեսպանությունը ՀՀ կառավարության և ժողովրդի կողքին է: Անտառային հրդեհները Միացյալ Նահանգներում, Հայաստանում, թե այլուր սպառնալիք են շրջակա միջավայրի, բնակավայրերի ու համայնքների համար: Բնապահպանության նախարարության հետ մենք նաև շարունակաբար աշխատում ենք բնապահպանական տարբեր հարցերի ու ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման

հարցերի շուրջ»,- իր խոսքում նշել է դեսպան Միլզը: Հանդիպման ավարտին կողմերը խոսել են նախարարության կարողությունների հզորացման, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման հարցերի, մասնավորապես, USAID-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասին: Դեսպանը առանձնահատուկ ուշադրությանն է դարձրել նախարարի ներկայացրած բնություն-արտաքին պարտք մեխանիզմին:



Աշխարհում 10-րդը, իսկ եվրասիական տարածաշրջանում՝ առաջինը

Օգոստոսի 30-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի քաղաքականության և ծրագրերի օժանդակության գլոբալ բնապահպանական ֆինանսական գրասենյակի գործադիր համակարգող Ադրիանա Դինուի հետ: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուզետտոն, ՀՀ բնապահպանության նախարարության պատասխանատու անձինք: Նախարարը ողջունել է հյուրերին, շնորհակալություն հայտնել ՄԱԶԾ-ին բազմաթիվ ծրագրերի իրականացման շարունակականության համար: Արծվիկ Մինասյանը նշել է, որ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և Կանաչ կլիմայի հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ ՀՀ բնապահպանության նախարարության համակարգման ներքո ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ծրագրերը տվել են արդյունք և ներկայումս նախարարությունը նպատակադրել է ավելի բարձր արդյունքների ստացումը, որպեսզի ստեղծվի համագործակցության այնպիսի մոդել, որն օրինակելի կլինի այլ երկրների համար: Նախարարը հակիրճ խոսել է գերատեսչության գործառնությունների մասին, անդրադարձել իրականացվող բարեփոխումներին: Հյուրերին ներկայացվել է նաև Հայաստանի կենսաբազմազանության ներկա վիճակը: Ադրիանա Դինուն շնորհակալություն է հայտնել հանդիպման հնարավորության համար, ներկայացրել իր աշխատանքը, այն հնարավորությունները, որոնք կարող է ակնկալել Հայաստանը բնապահպանական հիմնադրամներից: Իր խոսքում ՄԱԶԾ-ի պաշտոնյան շեշտել է, որ Հայաստանն արդեն օրինակելի է արձանագրած իր արդյունքներով, մասնավորապես, «Շենքերի էներգա-արդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրին մասնակցության առումով, որը Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) կողմից աշխարհում ֆինանսավորված թվով 10-րդն է, իսկ եվրասիական տարածաշրջանում՝ առաջինը, որի մեկնարկային աշխատաժողովը նախատեսված է օգոստոսի 31-ին: Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև անտառային վերջին հրդեհներին, տնտեսական խնդիրների էկոհամակարգային լուծումներին, նախարարության կարողությունների հզորացմանը և մի շարք այլ հարցերի: Հանդիպման ավարտին Արծվիկ Մինասյանը Ադրիանա Դինուին է նվիրել Հայաստանի Հանրապետության կարմիր գիրք և «Կանաչ Հայաստան» հրատարակությունները: Հյուրին հաճելիորեն զարմացրել է կովկասյան ընձառնուծի հետ նկարվելու առաջարկը, ինչ էլ իրականացվել է համակարգչային հավելվածի միջոցով ընձառնուծի եռաչափ անիմացիոն պատկերի համադրմամբ:

50-60 տոկոս էներգախնայողությունն շենքերի ջերմա- յին մեկուսացման միջոցով



Օգոստոսի 31-ին աշխատանքն է սկսել «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի մեկնարկային աշխատաժողովը: Հավաքի իմաստն էր ներկայացնել ծրագրի հիմնական նպատակները և նախատեսված միջոցառումները, ինչպես նաև էներգաարդյունավետության բարձրացման գծով շենքերի ոլորտում առկա միջազգային փորձը և նվաճումները: Աշխատաժողովին բացման խոսքով հանդես են եկել ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուզետտոն, Երևանի փոխքաղաքապետ Կամո Արեյանը, ՀՀ ԷԲԴՊ նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանը, ՄԱԶԾ քաղաքականության և ծրագրերի օժանդակության համար գլոբալ բնապահպանական ֆինանսական բյուրոյի գործադիր համակարգող Ադրիանա Դինուն: Ողջունելով աշխատաժողովի մասնակիցներին և բարձրաստիճան հյուրերին՝ նախարար Ա. Մինասյանը շնորհակալություն է հայտնել Կլիմայի կանաչ հիմնադրամին, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին՝ իր բնույթով նորարարական և բարդ ծրագրի մշակման և այն կյանքի կոչելու վստահության համար: «Ծրագիրն ունի բնապահպանական ուղղվածություն, այն է՝ կրճատել ջերմոցային գազերի արտանետումները, որը համահունչ է կլիմայի փոփոխության մեղմման միջազգային գործընթացների նպատակներին: ՀՀ բնապահպանության նախարարությունը, որպես ծրագիրը համակարգող գերատեսչություն, ամենայն պատասխանատվությամբ գիտակցում է դրա հաջող իրականացման կարևորությունը, որի տեսանելի արդյունքներն օրինակելի կարող են դառնալ և ծառայել որպես երաշխիք Կլիմայի կանաչ հիմնադրամի կողմից նոր ռեսուրսների ներգրավման համար: Կարևորում ենք այն հանգամանքը, որ շենքերում էներգետիկ ռեսուրսների սպառման կրճատումը, բացի ակնհայտ սոցիալական օգուտներից, համապատասխանում է նաև մեր երկրի էներգետիկ անկախության բարձրացման և շենքային ֆոնդի պահպանության քաղաքականությանը», - նշել է Արծվիկ Մինասյանը՝ ծրագրի հաջողու-



թյան գրավականը համարելով գործընկերային մթնոլորտի ստեղծումը պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի միջև: ԿԿՀ կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագիրը միտված է նպաստելու ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը Հայաստանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից: Նախատեսվում է ապահովել մոտ 50-60 տոկոս էներգախնայողություն շենքերի ջերմային մեկուսացման միջոցով: Այս ծրագիրը հասցեագրվելու է ինչպես հասարակական, այնպես էլ բնակելի շենքերին, կենտրոնանալով շուկայի խոչընդոտների հաղթահարման միջոցով էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների կենսունակ բիզնես-մոդելի և բարենպաստ շուկայական միջավայրի ստեղծման վրա: Քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքների համադրության և շուկայի առանցքային խաղացողների և շահառուների համար հասցեագրված ֆինանսական արտոնությունների միջոցով փորձ է արվելու հաղթահարել էներգաարդյունավետության միջոցառումների խոչընդոտները: Ծրագիրը Կլիմայի կանաչ հիմնադրամի կողմից աշխարհում ֆինանսավորված 10-րդն է, իսկ եվրասիական տարածաշրջանում՝ առաջինը: Վեց տարվա տևողությամբ այս ծրագրի համար Կանաչ կլիմայի հիմնադրամը տրամադրել է 20 մլն դոլար դրամաշնորհային միջոցներ:

Խորհուրդը հաստատել է ծախսերի նախահաշիվը եւ տեղակալի թեկնածությունը

«» Բնապահպանության նախարար Ա. Մինասյանի նախագահությամբ կայացել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցել են խորհրդի անդամներ՝ ՀՀ վարչապետի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ինչպես նաև գիտական ոլորտի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհուրդը քննարկել է օրակարգային 3 հարց՝ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2017թ. տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը հաստատելու և ՀՀ կառավարություն ներկայացնելու, Տեսչական մարմնի 2018թ. բյուջետային հայտի քննարկման և մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու համար Արմեն Հակոբյանի թեկնածության հարցերը: Խորհուրդը հաստատել է ՀՀ

բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2017թ. տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը և հավանություն է տվել Արմեն Հակոբյանին տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելուն: «Տեսչական մարմնիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար եղիչ Տերտերյանին հանձնարարվել է 1-օրյա ժամկետում 2017թ. տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը ներկայացնել ՀՀ կառավարություն և լիազոր մարմին, 2018թ. բյուջետային հայտը լրամշակել և մինչև սեպտեմբերի առաջին տասնօրյկը ներկայացնել խորհրդի հաստատմանը, ինչպես նաև ՀՀ վարչապետին ներկայացնել տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Արմեն Հակոբյանի թեկնածությունը:



Հրդեհի փոքրիկ օջախներ նաև «Սևան» ազգային պարկի տարածքում



«» Բնապահպանության նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքներում շարունակվում են իրականացվել խիստ հսկողություն և հակահրդեհային միջոցառումներ: Օգոստոսի 29-ին «Սևան»

ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում արձանագրվել է հրդեհի բռնկման երկու դեպք. ժամը 16:00-ի սահմաններում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Արևիկի մասնաճյուղի Փամբակ տեղամասում անհայտ պատճառով հրդեհ է բռնկվել, ինչի արդյունքում այրվել է մոտավորապես 5 հա չոր խոտածածկ տարածք: Ժամը 20:00-ի սահմաններում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Արտանիշի մասնաճյուղի Դրախտիկ տեղամասում անհայտ պատճառով հրդեհ է բռնկվել, ինչի արդյունքում այրվել է 500մ² չոր խոտածածկ տարածք: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հրդեհները մարվել են: Հիշեցնենք, որ համաձայն ՀՀ բնապահպանության նախարար Ա. Մինասյանի 2017 թ. հուլիսի 17-ի N 232-Ա հրամանի՝ ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքները գտնվում են շուրջօրյա խստացված հսկողության տակ, ձեռնարկվում են կանխարգելիչ միջոցառումներ:

«Հրդեհավարակը» հասավ «Դիլիջան» ազ- գային պարկ, բայց չեզո- քացվեց ակնթարթորեն



Համաձայն ՀՀ բնապահպանության նախարար Ա. Մինասյանի 2017 թ. հունիսի 17-ի N 232-Ա հրամանի՝ ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվում է շուրջօրյա խստացված հսկողություն, ձեռնարկվում են կանխարգելիչ միջոցառումներ: Օգոստոսի 30-ին «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում արձանագրվել է հրդեհի բռնկման երկու դեպք. ժամը 17:00-ի սահմաններում հրդեհ է բռնկվել «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Յաղարծին տեղամաս» մասնաճյուղի թիվ 7 պահաբաժնի ներքին հատվածում՝ համայնքային աղբավայրի մոտակայքում: Հրդեհը տեղայնացվել և մարվել է ազգային պարկի աշխատակիցների ուժերով: Ամ-

տառին եական վնաս չի պատճառվել: Այրվել է մոտավորապես 1 հա խոտածածք տարածք: Նույն ժամի սահմաններում հրդեհ է բռնկվել «Գոշ տեղամաս» մասնաճյուղի թիվ 2 պահաբաժնին կից համայնքային տարածքում, որը նույնպես տեղայնացվել և մարվել է: Կրակն անտառի տարածք չի թափանցել: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի այրված հատվածներում դեռևս առկա են ծխացող օջախներ: Արգելոցի և ՀՀ ԱԻՆ հրշեջ փրկարարների կողմից իրականացվում են օջախների չեզոքացման աշխատանքներ և սահմանված է շուրջօրյա հսկողություն: ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող մյուս տարածքներում հրդեհների բռնկման դեպքեր չեն արձանագրվել:

Որսագողությունն էլեկտրահարման միջոցով ոմանք անտառն են փրկում, ոմանք էլ...



Օգոստոսի 27-ի երեկոյան «Խոսրովի անտառ» պետական արգելոցի և ՀՀ բնապահպանության նախարարության մյուս ստորաբաժանումների աշխատակիցները, հրդեհված տարածքներում հետմարման աշխատանքների ընթացքում, իրականացրել են դիտարկումներ հատուկ պահպանվող տարածքի բոլոր տեղամասերում, որի ընթացքում, օգոստոսի 28-ի գիշերվա ժամը 2:30-ին արգելոցի տարածքի Կաքավաբերդ տեղամասով անցնող ճանապարհին նկատել են Նիվա մակնիշի սպիտակ գույնի ավտոմեքենա, որում հայտնաբերվել է «կարմրախայտ» տեսակի 533 հատ ձուկ, մեկ մարտկոց, երկու հոսանքի ձևափոխիչ և ձկնորսական այլ պարագաներ: Մեքենայում եղել են ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղի բնակիչներ, 1978թ. ծնված Ն. Վ.-ն և 1977թ. ծնված

Վ. Պ.-ն: Փաստի մասին տեղեկացվել է ՀՀ ոստիկանության Արարատի տարածքային բաժին: ՀՀ բնապահպանության նախարարության և ոստիկանության աշխատակիցների կողմից կատարվել է առգրավված ձկան և որսամիջոցների հաշվառում: Հաշվարկվում է շրջակա միջավայրին հասցված վնասի չափը: Նախնական տվյալներով ձկնորսությունն իրականացվել է առանց ձկնորսության թույլտվության և անթույլատրելի եղանակով՝ էլեկտրահարման միջոցով: Ոստիկանության հետ համատեղ կազմվել են արձանագրություններ, նյութեր և փոխանցվել քննչական մարմիններին՝ համապատասխան քննություն իրականացնելու նպատակով: Քննության արդյունքում կիստակեցվեն իրավախախտման վայրը և իրավախախտների ամբողջական շրջանակը:



«Նաիրիս»-ի հարակից սարածֆների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու դարունակությունը գերազանցել է ՍԹԿ-ն ՀՀ Բնապահպանության նախարարության համադասասխան ստուգաբաժանումների կողմից 2017թ. օգոստոսի 28-ին ժամը 14:30-15:00-ի սահմաններում

«Նաիրիս» գործարանի հարակից տարածքներում «Նաիրիս» գործարանի հարակից տարածքներում ընդհանուր առմամբ օդի աղտոտվածության մոնիթորինգը ցուցաբերում է մթնոլորտային օդում ակտիվ մոնիթորինգը որոշված զետեմբերի օգոստոսի երկօքսիդի պարունակությունները դիտվել են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների / ՍԹԿ/ տիրույթներում, ծծմբի երկօքսիդը գերազանցել է ՍԹԿ-ն 1,6, ընդհանուր փոշին 3,6 անգամ: Տարածքի մերձակայքում տեղադրված 6 պասիվ մոնիթորինգի տվյալների համաձայն՝ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան 5 դիտակետում գերազանցել է ՍԹԿ-ն 1,1-4,8 անգամ: Բոլոր 6 դիտակետերում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 2,1-6,0 անգամ: ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 16-ի N1186 որոշման համաձայն վտանգավոր է համարվում մթնոլորտի աղտոտվածության այն մակարդակը, որի դեպքում ՍԹԿ-ն երկու օրից ավելի գերազանցում է 20-29 անգամ, 8 ժամից ավելի՝ 30-49 անգամ կամ 2 ժամից պակաս՝ 50 անգամ և ավելի, այսինքն, արձանագրված կոնցենտրացիաները բազմակի անգամ ավելի ցածր են, քան վտանգավորության նվազագույն շեմը: Հետևաբար, արձանագրված գերազանցումները մարդու առողջության համար անմիջական վտանգ չեն ներկայացնում: ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկացնում է նաև,

որ «Նաիրիս» գործարանի տարածքում բռնկված հրդեհից որևէ քաղաքացի մարմնական վնասվածք չի ստացել: Հրդեհաշիջման աշխատանքների ընթացքում ծխահարված հրշեջներն անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալուց հետո դուրս են գրվել հիվանդանոցից: Առողջապահության նախարարությունը խորհուրդ է տալիս հրդեհի հարակից տարածքների բնակիչներին, որտեղ զգացվում են դրա հետևանքով առաջացած արգասիքները (փոշի, անսովոր հոտ, ծուխ), փակել բնակարանների դռները և պատուհանները: Առավել խոցելի են երեխաները, հղի կանայք, ծերերը և շնչառական հիվանդություններ (մասնավորապես՝ ասթմա, բրոնխիտ, սիրտթոքային անբավարարություն) ունեցողները: Նշյալ հիվանդություններով տառապող անձանց խորհուրդ է տրվում բաց չթողնել իրենց առօրյա դեղորայքի ընդունումը, խստագույնս հետևել բժշկի նշանակումներին, իսկ հիվանդության սրացման ախտանիշների դեպքում՝ անհապաղ դիմել բժշկի: Դիտարկումները շարունակվում են և դրանց վերաբերյալ պարբերաբար կներկայացվի տեղեկատվություն:

**ՀՀ բնապահպանության նախարարություն
ՀՀ առողջապահության նախարարություն
ԷկոԼուր**



«Նաիրիս» գործարանի հարակից ջրերում լաբորատոր անալիզների արդյունքներով գերազանցումներ չեն արձանագրվել

«Նաիրիս» գործարանի հարակից տարածքում ընդհանուր առմամբ օդի աղտոտվածության մոնիթորինգը ցուցաբերում է մթնոլորտային օդում ակտիվ մոնիթորինգը որոշված զետեմբերի օգոստոսի երկօքսիդի պարունակությունները դիտվել են սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների / ՍԹԿ/ տիրույթներում, ծծմբի երկօքսիդը գերազանցել է ՍԹԿ-ն 1,6, ընդհանուր փոշին 3,6 անգամ: Տարածքի մերձակայքում տեղադրված 6 պասիվ մոնիթորինգի տվյալների համաձայն՝ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան 5 դիտակետում գերազանցել է ՍԹԿ-ն 1,1-4,8 անգամ: Բոլոր 6 դիտակետերում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 2,1-6,0 անգամ: ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 16-ի N1186 որոշման համաձայն վտանգավոր է համարվում մթնոլորտի աղտոտվածության այն մակարդակը, որի դեպքում ՍԹԿ-ն երկու օրից ավելի գերազանցում է 20-29 անգամ, 8 ժամից ավելի՝ 30-49 անգամ կամ 2 ժամից պակաս՝ 50 անգամ և ավելի, այսինքն, արձանագրված կոնցենտրացիաները բազմակի անգամ ավելի ցածր են, քան վտանգավորության նվազագույն շեմը: Հետևաբար, արձանագրված գերազանցումները մարդու առողջության համար անմիջական վտանգ չեն ներկայացնում: ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկացնում է նաև,

հարակից հոսող 3 առուների ջրերից: Նմուշառումներից մեկն իրականացվել է լաբորատորի պահպանման տարաների հարակից առվից: Լաբորատոր անալիզների արդյունքներով վերոհիշյալ ջրերում գերազանցումներ չեն արձանագրվել:

«Արեւիկ» ազգային պարկում բռնկված հրդեհն տեղայնացվել է



Սույն թվականի սեպտեմբերի 2-ին ժամը 14:00-ի սահմաններում հրդեհ է բռնկվել ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ և Տաշտուն համայնքներին հարակից «Արեւիկ» ազգային պարկի տարածքներում: Այրվել է 7-8 հեկտար խոտածածկ տարածք: ՀՀ բնապահպանության

նախարարության «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի աշխատակիցները և ՀՀ ԱԲՆ հրշեջ փրկարարները հանգրեղել և կանխել են հրդեհի տարածումը երեք ուղղություններով, ավարտվում են չորրորդ ուղղության հրդեհաշիջման աշխատանքները:



«Նաիրիտ» գործարանի տարածքում բռնկված խոշոր հրդեհը հաջողվեց ամբողջությամբ մարել երկու օր անց:

«Նաիրիս» գործարանում բռնկված հրդեհի շուրջ առկա ռեսուրսները առավել ամբողջական դարձնելու նպատակով մեքսիկացի նրա ընկերությանը հանձնված «Մեդիա կենտրոն»-ում կազմակերպված ֆինանսական մասին դասընթացը

Օգոստոսի 30-ին «Մեդիա կենտրոնում» հրավիրված «Հրդեհի «Նաիրիտում» էկոլոգիական ռիսկեր և գնահատականներ պետական կառույցների աշխատանքին» խորագիրը կրող քննարկումը Նաիրիտի տարածքում բռնկված հրդեհի դիտարկման միջոցով միտված էր հասկանալու, թե որքանով ենք հանրությունը պաշտպանված տեխնոստիկ և բնական աղետներից և ինչպիսի՞ անհրաժեշտ միջոցառումներ պետք է ձեռնարկվեն նման դեպքերի կրկնությունը նվազագույնի հասցնելու, իսկ աղետի դեպքում հավուր պատշաճի պաշտպանվելու համար: Նախ ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի մթնոլորտային օդի որակի ուսումնասիրության լաբորատորիայի վարիչ Արփինե Գաբրիելյանը նշեց, որ իրենց կենտրոնը վերջին երկու օրերին ակտիվ չափումներ է իրականացրել՝ օդի աղտոտվածության չափը որոշելու համար: «Հրդեհի օրը չափումներ իրականացվել են և ընդհանուր առմամբ աղտոտվածության մակարդակի գերազանցումներ եղել են, բայց գերազանցումներն այն չափի չէին, որ վտանգ սպառնար բնակչու-

թյանը: Ազոտի երկօքսիդն է գերազանցել, ծծմբի երկօքսիդը և ընդհանուր փոշին: Սակայն երկրորդ օրն արված անալիզները ցույց տվեցին, որ գերազանցումները նվազել էին և ունեինք միայն ծծմբի երկօքսիդի գերազանցում», -ասաց Գաբրիելյանը: Արձագանքելով Արփինե Գաբրիելյանի ասածներին՝ քիմիկոս, Նաիրիտ գործարանի նախկին աշխատակից Հրաչիկ Սիրգոյանը նշեց, որ նույնիսկ անգն աչքով տեսանելի էր, որ մթնոլորտ է արտանետվում մեծ քանակությամբ մուր: «Թերայրում է կատարվել, մուրը դրա արդյունքն է և հետևաբար պետք է առաջանար շնոլ գազ, սակայն կատարված անալիզների մեջ այս երկու բաղադրիչը բացակայում է», -ասաց Սիրգոյանը: Անդրադառնալով հրդեհի պատճառներին՝ մասնագետը համոզմունք հայտնեց, որ ամենայն հավանականությամբ չի պահպանվել այրված նյութի պահպանման, պահեստավորման տեխնոլոգիական գործընթացը: «Էթիլոլ լաքը պոլիմերվող նյութ է, տվյալ նյութի մոլեկուլային մասսան անընդհատ աճում է, ինչը ուղեկցվում է ջերմության անջատումով:

շարունակությունը էջ 8 /

• «Նաիրիս» գործարանի սարածֆուն բռնկված խոշոր հրդեհը հաջողվեց անբողջությամբ մարել երկու օր անց

Սկիզբը՝ էջ 71



Այդ պոլիմերումը կասեցնելու համար նրան խառնում են պոլիմերումը խոչընդոտող նյութեր: Իսկ այդ նյութը ժամանակի ընթացքում կորցնում է անհրաժեշտ խտությունը, որի արդյունքում էթինոլ լաքի պոլիմիտերումը շարունակվում է, անջատվում է ջերմություն, ինչի հետևանքով էլ կարող է լինել ինքնաբռնկում և պայթյուն»,-ասաց Միրզոյանը: Աժ պատգամավոր Լենա Նազարյանը, խնդրին անդրադառնալով, նշեց, որ իր համար տարօրինակ էր դեպքից հետո, օրինակ, ՀՀ առողջապահության նախարարության գործելաոճը: «Նրանց հայտարարությունը եղավ դեպքից 5 ժամ հետո: Մինչդեռ անտեղի խուճապը կանխելու համար անհրաժեշտ էր ավելի շուտ հայտարարություն տարածել և տեղեկացնել, թե ինչ պետք է մարդիկ անեն այդ իրավիճակում: Մարդիկ այդ ընթացքում տեղեկատվության պակաս ունեին,-ասաց Նազարյանը: Պատգամավորը նաև ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ մինչ այս հրդեհը վերջին տարիներին արդեն երկու անգամ գործարանի տարածքում խոշոր հրդեհ է բռնկվել: «2006-ին 2-ից 11 արտադրամասերում, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին հրդեհներ են եղել և այդ ժամանակ նույնպես վառվել են էթինոլ լաքի պահեստները: 2009 թ. երկու մեծ պայթյուն է տեղի ունեցել, որի արդյունքում զոհվել է 4 հոգի: Այս դեպքերը մարդկանց պետք է զգաստացնեին, որ անվտանգության կանոնները չեն պահպանվում և ավելի լուրջ մոտենալ խնդրին»,- նշեց Լենա Նազարյանը՝ հավելելով, որ այնպիսի տպավորություն է, որ Նաիրիտում անվերահսկելի իրավիճակ է և այդ պարագայում ՀՀ արտակարգ իրավի-

ճակների նախարարությունը պետք է այդ տարածքում անվտանգության ապահովման հանձնառությունը վերցնի իր վրա: Մեղիա փորձագետ Սամվել Մարտիրոսյանը անդրադարձավ ճգնաժամային իրավիճակներում բնակչությանը տեղեկատվություն տրամադրելու խնդիրներին՝ նշեց, որ առկա են սխալ մոտեցումներ նեղ մասնագիտական տեղեկատվություն տրամադրելու հարցում և ընդհանուր քիմիայի տեղմիներով «ժանգոյրություն» անելը լավագույն ձևը չէ հանրության հետ շփվելու համար: «Այստեղ նշվեց, որ ազոտի երկօքսիդի պարունակությունը օդում բարձր է: Քանի հոգի գիտի, թե ի՞նչ է ազոտի երկօքսիդը: Ազոտի երկօքսիդը հնչում է բավականին մեղմ, սակայն այն լուրջ թունավոր գազ է: Ինձ թվում է՝ պետք է խոսել մի քիչ մարդկային լեզվով: Եթե դուք ասում եք ծծմբի երկօքսիդի պարունակությունը բարձր է, դուք ոչինչ չեք ասում: Դուք պետք է ասեք, թե ինչո՞վ է դա վտանգավոր և ի՞նչ պետք է անել»,-հավելեց Մարտիրոսյանը: Մասնագետը կարծիք հայտնեց, որ բոլոր նախարարությունները պետք է ունենան արձանագրային ձև որոշակի իրադարձություններում հանրության հետ շփվելու համար: «Զպետք է լրիկական գեղումներ լինեն: Եթե եղել է հրդեհ, հանրությունը պետք է տեղյակ լինի, թե վտանգն ուր կարող է գնալ, պետք չէ ասել, որ ծուխը գնում է Թուրքիա, դա ինձ ոչինչ չի ասում, պետք է նշել, թե որ հայկական գյուղերն են գտնվում վտանգի գոտում և տրվեն համապատասխան ցուցումներ»,- ընդգծեց Մարտիրոսյանը:

«Մեղիա կենտրոն»

Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
խմբագիր՝ Սամվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517